

ԾԱՆԿԱՔԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Անի-ճառք :

Անտառակին աւարաւ
Աշուն գալուէ արկ գերկրաւ .
Թուփք եւ մացառք հողանիք ,
Սոխակ չունի դայլայլիկ :
Յայն ինչ կենաց այգուն փայլ ,
Մանուկ հիւանդ յամրաքայլ ,
Խաղայր գընայր յերթ վերջին
Յիւրն անտառակ սիրելին .
« Մայրիդ ողջ կաց . . . ընկճիմ ես .
Սուգ քո գուժէ զիմ աղէտս .
Յամէն անկման սաղարթու
Դիտեմ զգուշակըն մահու :
Եպիտաւրեան պատգամ խիստ
Ասաց . « Մայրիդ ոստախիտ
» Աչացդ հանգէպ գալկասցին ,
» Այլ իցէ այն եւ յետին :
» Յաւերթ պատի զքեւ նոճին .
» Ի գերեզման տապանին
» Գունաթափեալ քան զաշունդ .
» Անկցի խամբեալ մանկութիւնդ ,
» Նախ քան զծաղիկըն գաշտին ,
» Եւ նախ քան զուռ բլբուկին » :
Մեռանիմ ես . . . Յըրաշունչք
Եւ թուփք հարին զիս հողմունք .
Եւ իբր ըստուերս խուսափուկս
Տեսի զգարունս ի փախուստ :
Անկիր տերեւդ առօրեայ ,
Յաչաց զուղիս զայս սքօղեա
Թաքո յանյոյսն իմ մօրէ
Զվայրն ուր հանգէայց յայսմ հետէ :
Այլ թ'ի մեկնակ ճեմելին
Իմ հերարձակ սիրուհին
Գայ լալ ի մուտս արեգին ,
Զարթոք մեղմ ի խօշիւն
Պահ մի սփոփեալ զիմ ուրուն :
Ասաց , գընաց անդարձակ . . .
Եւ հուսկ տերեւն որ անկաւ
Ես զօրհասին նըշանակ .
Եգին ի հող ընդ կաղնեաւ . . .
Այլ չըգարձաւ սիրուհին
Այցել մեկնակ գամբանին .
Հովիւ գաշտին միայնակ
Ելլոյժ , յածել լոկ ոտին ,
Ըղըռութիւն տապանին :

ՄԻԼԸՎՈՒԱ

ԹԱՐԳ . Մ . ՆՍՏՅԵՆ

Ա. ՌԱՓ . ՎԱՐԺ .

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՐՈՂՈՍ Ա .

Անգղիացոց բազառք :

Թագաւորաց մէջ ինչպէս ոմանք փա-
ռօք՝ այնպէս ալ շատեր կան որ իրենց
աղետալից կենօք եւ մահուամբը պատ-
մութեանց ու արձանագրութեանց մէջ
իրենց յիշատակն են թողեր : Լյս եր-
կորդ կարգին երևելներուն (գոնէ
նոր ատեններուս մէջ) մէկն է Կարողոս
Ա . Լնգլիոյ թագաւորը , որ Սղուար-
դեանց ցեղէն կ'իջնար . այն թշուառ
ազգատոհմէն՝ որուն իր աղետից մեծու-
թեամբը նոր ու տիրադոյն համբաւ
մը պիտի աւելցընէր : Իր հայրը (Յա-
կովբ Ա . Սարիամ Սղուարդ Սկովտիոյ
հաշակաւոր թագուհւոյն որդին էր .
ով կրնար կարծել թէ այն խեղճ դըշ-
խոյին չարագուշակ բաղդը նաեւ իր
թուանը վրայ պիտի բռնանար , հաւա-
սար ցաւալի եւ տխուր վերջով մը եր-
կուքին կեանքն ալ զրաւելով :

Երբոր հայրը մեռաւ , ու Կարողոս
իրեն տեղը անցաւ 1625ին , Լնգլիա
շատ խեղճ վիճակի մէջ էր : Լյս ընդ-
հանուր պարագաներէն զատ , որ ո՛ր
իցէ իշխանի մը հասարակ են , Կարո-
լոսի մէկ ուրիշ դժբախտութեանց զըլ-
խաւոր պատճառ մ' ալ կար , որ էր Պը-
քինկէմ դքսին ձեռք ձգած հեղինա-
կութիւնը . ասիկայ Կարողոսի հօրը վը-
րայ ունեցած ազդեցութիւնը ասոր վը-
րայ ալ բանեցընելով , զինքը մեծամեծ
չարեաց մէջ ձգել տուաւ . ու հազիւ
թէ գահը ելաւ՝ տերութեան մեծա-
մեծաց խորհրդարանին հետ սկսաւ
թշնամանալ : Լյս անօրէն պաշտօնա-
կալը ոչ միայն Սպանիան Լնգլիոյ դէմ
եւ զԼնգլիա Գաղղիոյ դէմ պատերազ-
մի զրգուեց , հապա նաեւ Լնգլիոյ կա-
ռավարութեանը ու ժողովրդեանը մէջ
կռիւներ ձգեց : Թագաւորը , պատե-
րազմը շարունակելու համար խորհրդա-
րանէն դրամական օգնութիւն ուզեց .



Կարոլոս Ա. Անգլիացոց բազառոր .

ան ալ առջի բերան չուզեց տալ, վերջէն ալ շատ մեծ ճշգրութեամբ : Խորհրդարանը ցրուեցաւ . թագաւորն ալ տեսաւ որ օրինաւորապէս չի կարենայ պիտի ուզած ստակը ժողովել, սկսաւ բռնութեան ու ինչուան ապօրինաւոր միջոցներու ձեռք զարնել : Շատ ուշ հասաւ Պրքինկէմին մահը , որ այս վրտանգաւոր խորհուրդը տուեր էր իրեն : Ընտան հարկ եղաւ որ թագաւորը իր և տէրութեան ստակէն գործածէ . որով տէրութեան և խորհրդարանին մէջ եղած երկպառակութիւնները աւելի սաստկացան : Երթալով վէճերը մեծցան . քաղաքական , սահմանադրական և կրօնի խնդիրներուն վրայ՝ դրամաժողովինն ալ աւելցաւ :

Իսկ այն միջոցին որ մէկ կողմանէ ատենանք երբեմն օրինաւոր և երբեմն ապօրինաւոր գործողութեանց ձեռք կը զարնէր . և մէկալ կողմանէ տէրութիւնը իմաստուն և երբեմն բռնութեան ու վատութեան հնարքներով իր խորհուրդը առաջ կը տանէր , թագաւորը վերջին ճգամբ հնարք մը մտածեց՝ խորհրդարանին զօրութիւնը կտրելու : Եւ այլ յայտարարութիւններով՝ յայտնի կը ցուցնէր ազգին՝ տէրութեան ինչպիսի վիճակի մէջ ըլլալը , և թէ ինքը մինակ կ'ուզէ կառավարել՝ առանց խորհրդարանին . որ էր ըսել թէ Բնգղիա իր սահմանադրական կառավարութեան ինքնիշխան կառավարութեան տակ պիտի երթար :

Երտաքին պատերազմներուն լմրննալովը՝ խաղաղութիւնը տիրեց Բնգղիա . բայց սահմանադրութիւնները խանգարած էին , և Բնգղիա այնպիսի կանոնաւոր վիճակի մը մէջ չէր՝ որ կարենար միշտ հաստատուն կենալ , և 1628ին հանդիպած անկարգութիւնները , հակառակութեան և բռնութեան ոգի մը ձգեր էին թերահաւատ և զայրագին մտքերու մէջ , և խորհրդարանին՝ ազգին իրաւանցը և ազատութեանը համար ըրած վերջին յայտարարութիւնները , այնպիսի խօրին խաղաղութեան միջոցն ալ գեռ եր-

բեմն երբեմն կը լսուէին : Երջապէս , Բնգղիացիք չէին ուզեր ամենեւին ինքնիշխան կառավարութիւնը , թէպէտ և վերջի տասը տարուանը մէջ իրենց հանգըստեանը պատճառ էր եղած , ազգին այս զգաւարութեան սկսան հերձուածներ , որով և մեծ խռովութեան մը յայտնի նշաններ : Եւ որ կռիւ մըն ալ ծագեցաւ , որ առաջուց ալ դիւրին էր գուշակելը , և ան ալ այնպիսի նիւթոյ մը վրայ՝ որ ամենէն աւելի վտանգաւոր , ու քան զամէնն աւելի դժուարաւ կրնայ մարիլ : Եւրոպոսին հայրը զինքը յորդորէր էր որ Արմիտիոյ եկեղեցին Բնգղիոյ հետ միացնէ . և Եւրոպոսի Արմիտիա ըրած ճամբորդութեան միջոց այս բանիս համար ըրած փորձերը լաւ կերպով յաջողեցան . բայց վախնալով որ չըլլայ թէ մէկէն ի մէկ ծանր գայ իրենց աս առաջարկութիւնը , ամբողջական որոշումը ուրիշ ատենի մը թողուց : Եւ այն միջոցին՝ Եւրոպոսի այս խորհրդին դէմ եղող կրօնական թշնամիները ետեւէ եղան որ խափանեն այս առաջարկութեան գործադրութիւնը , ինչպէս որ յաջողեցին ալ . և երբոր Եւրոպոս հրաման հանեց որ Արմիտիացիք Բնգղիական կրօնից հետեւին (1637) , առջի բերան ապրտամբական խռովութեան ձայներ ելան , և քիչ ատենէն ալ կրօնքի այն բազմահոգակ յայտարարութիւնը հրատարակուեցաւ , որ Քրիստոս կ'ըսուի : Եւրթ թագաւորը իր առջի անորոշութիւնը նորէն ձեռք առաւ ու զօրաւոր միջոցներ չէր բանեցընէր խռովութիւնը զուպելու , Արմիտիոյ երիցական աղանդաւորները աւելի գրգռուեցան , և քիչ ատենէն կրօնական ապստամբութիւնը յայտնի ապստամբութեան դարձուցին (1635) . և մէկէն Արմիտիացիք պատերազմի բանակ մը կազմեցին : Եւ թագաւորը շուտ մը այնչափ զօրք ժողովեց՝ որ կրնար բոլորովին Արմիտիացիքը նուաճել , բայց որովհետեւ իրենց հայրենակից կը կոչուէր և վրանին ալ մեծ գութունէր , անոր համար նայեցաւ որ մինակ զիրենք վախցընէ : Արմիտիացիք առ

ժամն հպատակիլ ձևացուցին, ինչուան որ Վարդուս զինադադարում ըրաւ. և հազիւ թէ թագաւորական բանակը ցրուեցաւ՝ Սկովտիացիք ամենայն կատաղութեամբ մէկէն ոտք ելան. այս ապստամբութիւնը այնպիսի սկիզբ մը ունեցաւ (1639) : Եւս կերպով ահա սկսաւ այն պատերազմը՝ որն որ թագաւորութեան դէմ սկսաւ Բնգղիոյ մէջ, և որ անոր հետ մէկտեղ ալ պիտի վերջանար, ինչպէս որ պիտի տեսնենք :

Սկովտացւոց բռնութեանը դէմ ղնելու համար, հարկ էր որ Վարդուս Բնգղիոյ հետ միանայ. և որոշեց որ այս բանս խորհրդարանին ձեռքովը ըլլայ. բայց այնպիսի դժուարին պարագաներ կային, և խորհրդարանը այնպէս կասկածաւոր էր, արքունիքը բոլորովին տկարացած, և խեղճ թագաւորը այնպիսի խորամանկ և անօրէն խորհրդականներու ձեռք ինկեր էր, որ խորհրդարանը օգնութիւն մը չընելէն զատ՝ փնասակար ալ սեպուեցաւ. և գահավէժ կերպով մը լուծուեցաւ : Բանի մը ամիս վերջը Վարդուս ստիպուեցաւ Սկովտացւոց հետ դաշինք դնելու, և օգնական զօրք վարձելու. ու նոյեմբերի մէջ (1640), այն հռչակաւոր ժողովքը կանչելու, որ Երէար խորհրդարան աւանդուեցաւ, և որ Բնգղիոյ տարեգրութեանց մէջ Վաղդիացւոց խռովութեան տեսնի Ապօպի թողութիւն ոգին և նմանութիւնն ունի : Երկու տարի չանցած Բնգղիա քաղաքական պատերազմներով լեցուեցաւ. բայց վերջապէս Վարդուս յաղթուելով զիջաւ խորհրդարանին : Ինքը որ ատեն մը զՎրբինկէմ պաշտպանելու համար ամէն կերպ բռնութիւն բանեցուցած էր, հիմա իր հաւատարմագոյն ծառային Սթրէֆըրտ դուքսը պաշտպանելու համար ամէն տեսակ զիջողական թոյլ և նուաստ միջոցներու ձեռք զարկաւ : Սթրէֆըրտին կենացը մեծ թշնամին էր խորհրդարանը, վասն զի տէրութեան վրայ մեծ ազդեցութիւն ունեցող խորհրդականն էր. ասոր վերջապէս գլուխը կտրեցին. կարգը եկաւ Բենդերպրիի յորտ

արքեպիսկոպոսին. ասիկայ Վրբինկէմի տեղն անցած Վարդուսի առաջին պաշտօնեայն էր, և Սկովտիոյ կրօնական միութեան ալ ամենայն իրօք ետեւէ էր, յուսով՝ որ բոլորին ալ գլուխ ինքնստի. որով Սկովտական երիցականաց ատելի ըլլալով, իբրեւ մատնիչ գլուխը կտրեցին : Եւս դիպուածներս՝ տէրութեան և թագաւորին դէմ շատ գէշ նշաններ էին :

Բնգղիա երկու ճեղքուեցաւ. երկուքն ալ առանձին իրեն գլուխն ունէր. Բրոմուէլ Վարդուսի ախոյեանն էր եղած : Եւս իրեք տարիի չափ բախտը թագաւորին զինուցը օգնական եղաւ. բայց վերջապէս՝ Եկզպայի քով այնպէս չարաչար յաղթուեցաւ Բրոմուէլէն, որ բոլոր առջի յաջողութիւնները փճացան (1645) : Եկէն փախաւ Վարդուս, ու Սկովտացւոց ապաւինեցաւ. անոնք ալ առին ու ստրկով Բնգղիացւոց ձեռքը տուին : Վարդուս ամենայն խեղճութեամբ ու նախատինքներով լցուած բանտէ բանտ քաշկրուտելով, վերջապէս Ուայթ կղզին քաշուեցաւ : Ինչեւ այն ատեն Վարդուս քիչ շատ սխալմունքներու մէջ ինկած էր, բայց թշուառութիւնը իրեն այն արժանաւայել ազնուականութիւնը տուաւ՝ զոր թագաւորական գահը չէր տուած. ու իր երկար բանտարկութենէն (1645-49) սկսեալ մինչեւ ազատութեան մահաբեր ժամը՝ իր կենացը փառաւորագոյն մասը եղաւ : Եւս միջոցիս Բնգղիական խռովութիւնը երթալով սաստկացաւ, որուն բոլոր զօրութիւնն, ուժն ու ջանքը հետզհետէ աւելի կեդրոնանալու կը դիմէր : Եւ վերջապէս բարոյական ու քաղաքական խռովութիւնը մէկ մարդու մը վրայ միացաւ. ասիկա էր Բրոմուէլ : Խռովութեան այս կեդրոնացումը Վարդուսի համար սպառնական բան մըն էր : Եւս այն թագաւորականը ցրուած էին ու իշխանութիւնները բոլոր լուծուած, ու նոր իշխանութեան մը տեղ էր բացուած : Բրոմուէլի խորհրդոցը կատարմանը մէկ արգելք մը միայն կար, որ էր թագաւորը. « Երբ

ցականք և ստպետք, ինչպէս որ պատմագիր մը կ'ըսէ, բոլորովին նուաճեր էին. և իշխանութիւնը հասարակապետականաց ձեւքն էր. քանի մը յառաջատես ու յանդուգն մարդիկ կը ջանային տէրութիւնը կառավարելու. մոլեռանդն ու խորհրդաւոր աղանդներ, լ'ստուծոյ օգնականութիւնը խռովարարաց կը խոստանային. զօրքն ալ ամենայն ոգւով կը պատերազմէր: Իսկ Վրոմուէլ բանակին գլուխն ու մոլեռանդից ալ պաշտպան կեցած էր:

Թագաւորին կենդանութիւնը՝ Վրոմուէլին առաջ երթալուն, և թագաւորին կուսակցութիւնը ջնջուելուն արգելք մըն էր: Բւ Վարդուսի բանը լմնցած էր. 1648^{ին} դատաստանի կանչուեցաւ իբրեւ գլխաւոր պատճառ և գրգռող քաղաքական պատերազմին. ու զինքը Ուայթ կղզիէն հանեցին ու Ուինստօր բերին: Եւ հոն իրեք անգամ զինքը դատաստանի կանչելէն վերջը, 'ի մահ դատապարտեցին: Իրեն մահուանը գլխաւոր պատճառ և դատաստաններու մէջ ամենայն դժուարութեանց առջին առնող Վրոմուէլ եղաւ. որն որ արդէն այլ և այլ դիպուածներու մէջ ալ ցրցուցեր էր ամենուն՝ իր ինչ աստիճանի խարդախ, կեղծաւոր, անգութ, վայրենի, և անպիտան մարդ ըլլալը: Իսկ ընդհակառակն թագաւորը իրեն վերջի միջոցներուն մէջ ցրցուց դատաւորաց և դահիճներու դիմացը իր թագաւորավայել ծանրութիւնը, քաջութիւնը, համակամութիւնն ու քաղցրութիւնը: Կարողոս Ա այն մահը ունեցաւ՝ զորն որ իրմէ ետեւ պիտի ունենար Վաղդիոյ Կարողոսը՝ Լուդովիկոս Ժ. Գլխատուեցաւ Կարողոս 'ի Ուայթ-Հոլ 1649^{ին}, փետրուարի 9^{ին}. զոր շատ սրտաշարժ պարզութեամբ կը պատմէ Կիզը Վաղդիոյ մեծահամբաւ պատմագիրներէն մէկը իր Լնգդիոյ խռովութեան ու Կարողոս Ա^{ին} պատմութեանը մէջ, զոր հոս կը թարգմանենք, միանգամայն իբրեւ մատենագրական ընտիր հատուած մը:

Չկնի չորից ժամուց խորին քնոյ, յարեաւ Կարողոս յանկողնոյ իւրմէ, և ստէ ցհերպէր. « Գործ մի մեծ առաջի կայ ինձ կատարել, վասն որոյ և արժան իսկ է զի յարեայց վաղագոյն », և առնոյր զհանդերձս իւր ագանկէ: Խռովեալ էր Հերպէր, և հարեանցի իմն յարգարէր զհերոս նորա: Ասէ ցնա թագաւորն. « Աղաչեմ զքեզ, զի զնոյն խնամագ 'ի կիր արկանիցես, որպէս յերեկն և յեռանգ. և թէպէտ չիցէ գլխոյո կալ զուսովքս ընդ երկար, այլ սակայն կամ է ինձ 'ի զարդ փեսայի զարդարիլ », Եւ զգեցեալ զհանդերձսն, խընդրեաց և շապիկ մի առաւել, և ստէ. « Յրտին է եղանակս, մարթ է ինձ զգողանի հարկանիլ. իցեն թերեւս որ երկիւղի զայդ ընծայիցեն, այլ ես չկամիմ պատճառս տալ կարծեացդ », Այն ինչ արեգակն ծագէր, եհաս անդր և եպիսկոպոսն, և սկիզբն լինէր կրօնական հանդիսիցն: Եւ ընթեռնոյր նա, 'ի Եւ գլուխ աւետարանին Մատթէի, զբարձարանս փրկչին Յիսուսի: « Տէր իմ, եհարց ցնա թագաւորն, մի արդեօք ընտրեալ իցէք զայդ գլուխ իբր զվիճակիս իմոյ պատկանաւոր », Պատասխանի ետ եպիսկոպոսն և ստէ. « Գիտուն լիցի տէրութիւն քոյ, զի աւուր պառաշաճի է աւետարանդ, որպէս և տօնացոյցն յայտ առնէ », Յայն ժամ յուզեցան գութք արքայի, և դարձեալ սկըսաւ աղօթել յաւելլով յեռանդեանն: Զտասն ժամաւ մեղմով իմն հարաւ դուռն սենեկին. ոչ ինչ շարժեցաւ Հերպէր. և երկրորդ անգամ լսելի եղև բաղնել դրանն՝ ստիպաւ ևս, թէպէտե քան զառաջինն մեղմագոյն: Ասէ թագաւորն. « Երթ տեսանել թէ ո՞ւր իցէ », և էր գնդապետն Հէքր. և ստէ թագաւորն. « Մուծէք զնա 'ի ներքս »:

« Տէր իմ, ստէ գնդապետն, ահաւանիկ ժամ է երթալոյ 'ի Ուայթ-Հոլ, անդ զմի ժամ և առաւել ևս հանդիցէ տակաւին տէրութիւն քոյ: — Եկից 'ի մօտոյ, պատասխանի ետ արքայ. թոյլ տուր ինձ », Եւ Հէքր և գնաց. և թագաւորն վայրիկ մի ևս զանձն ժողովեալ, կալաւ ապա զձեռանէ եպիսկոպոսին և ստէ ցնա. « Եկ երթիցոք. բաց դու զգուռն Հերպէր. զայս երկրորդ անգամ ազդ առնէ ինձ Հէքր », և էջ նա 'ի փակարանն՝ որ հանէրն զնա 'ի Ուայթ-Հոլ: Հէքր բախեաց զգուռն. ձէքն և Հերպէր անկան յոսա նորա. և ձգեալ թագաւորին զձեռս իւր ցեպիսկոպոսն ստէ. « Արի կանգնեաց, վաղեմիդ իմ բարեկամ », Եւ յորժամ բախեաց Հէքր զգուռն, միւսանգամ երաց Կարողոս. և ստէ ցնդապետն. « Անց յառաջոյ, զհետ քոյ դամ », Եւ անց նա ընդ դատաստանարանն, 'ի մէջ երկուց խռնեալ էին անդանօր, վտանգաւ իսկ կենացն զտեղի կալեալք անշարժ 'ի յետուստ կուսէ պահապան զօրացն, և աղերս վասն թագաւորին արկանէին, մինչդեռ անցանէր նա ընդ այն. և ինքեանք իսկ զօրականքն զուլութիւն կալեալ, ոչ ինչ ընդդէմ դառնային նոցա: Ի ծայր սրահին ընդ որմն անցս իմն գործեալ էր զայն գիշեր, որ դէպ ուղիղ հանէր 'ի տեղի կառափմանն, որաւեալ 'ի սեւաւ. երկուք ոմանք կանգուն կային առ տապարաւն, և էր նոցա հանդերձս արկեալ նաւաստեաց և գիմակս առեալ զերեսօքն:

Եհաս անդր թագաւորն, ուղղաձեմ գնացիւ, և շուրջ զիւրեւ յածեցուցեալ զաչս իւր, խնդրէր խօսել ընդ ժողովրդեան: Այլ զօրականին կալեալ

էր զվայրն և չէր ումեք մերձենալ առ նա : Եւ դարձաւ թագաւորն առ Ճէքոն և առ Թոմինսըն և ասէ ցնոսա . “ Ձեզ միայն իցէ լսել ձայնիս , ապա առ ձեզ զբանս իմ դարձուցանեմ ,” . և կարճ ի կարճոյ խօսեցաւ առ նոսա , զոր պատրաստեալ ինչ էր յառաջագոյն , ծանր իմն հանդարտութիւն ցուցանելով՝ եթէ միակ պատճառ աղիտից ժողովորդեանն էր արհամարհութիւն իրաւանց արքայի , և թէ չէր արժան ժողովորդեան խառնել յիրս անդ պետութեան , և զի ի սոյն և եթ պայման մարթ էր աշխարհին գառնալ ի խաղաղութիւն իւր և յազատութիւն : Եւ մինչդեռ խօսէր նա , մերձեցաւ ոմն ի տապարն . դարձաւ առ նա թագաւորն և ասէ . “ Մի՛ մնասեր տապարիդ , զի մի չար ևս ինձ պատահիցէ ,” : Յաւարտ խօսիցն այլ ոմն դարձեալ մօտ առ տապարն մատեաւ . և թագաւորին կրկնեալ անդրէն երկիւղագին ձայնիւ և ասէ . “ Չգուշացի՛ր տապարիդ . զգուշացի՛ր տապարիդ ,” : Անշունչ և անբարբառ լռութիւն ունէր զվայրն բովանդակ . և թագաւորն եգ ի գլուխ իւր գլխանոց ինչ մատաքոսայ . և դարձեալ ցգահիճն ասէ . “ Միթէ խո՞չ իցենք չեղքս իմ ,” : Պատասխանի ետ խոնարհութեամբ և ասէ այրն . “ Աղաչեմ զքեզ , տէր , զի ընդ գլխանոցաւդ զետեղիցես զգոսա ,” : Եւ ամփոփեաց արքայ՝ օգնելով և եպիսկոպոսին : Ասէ ցնա թագաւորն . “ Յիմ կոյս են արդարութիւն և Աստուած ամենողորմն ,” : Ասէ ցնա Ճէքոն . “ Այո տէր . քայլ մի ևս չմնայ քեզ անցանել , որ թէպէտ լի է ասիւ և անձկութեամբ , այլ սակայն և սակաւալիւսն ևս է . այլ և այն յուշ լինի քեզ , արքայ , զի զմեծ իմն ճանապարհ գործիցես զովաւ յերկրէ յերկինս ,” :

Թագաւորն ասէ . “ Յապականացուէս յանապականն անցանեմ թագաւորութիւն , ուր և ոչ մի ինչ կայցէ երկրաւ ,” : Եւ դարձեալ առ գահիճն ասէ . “ Չխորդ կայցեն հէրք գլխոյս ,” : Եւ հանեալ ի բաց զվերարկուն և զնշան սրբոյն Գեորգայ ետ յէպիսկոպոսն և ասէ . “ Յիշեալիւ զիս ,” : մերկացաւ ապա ի զգեստուցն և արկաւ անդրէն զվերարկուն , և զակն ի կոճղն դարձուցեալ ասէ ցգահիճն . “ Տես զի իցէ դա հաստատուն ,” . և նա ասէ . “ Հաստատուն է տէր իմ ,” : Ասէ թագաւորն . “ Առ սակաւ մի կամ ես յաղթմս , և յորժամ ձգեցից զձեռն իմ , յայնժամ . . . ,” : Եւ ժողովեալ զանձն ասաց բանս ինչ գաշն ձայնիւ , ամբարձ զաչս իւր յերկինս , և ի ծուռն իջեալ՝ եգ զգլուխ իւր ի վերայ փայտին , և գահին բուռն հարեալ զհարացն զի ընդ գլխանոցաւն արկանիցէ , թուեցաւ թագաւորին եթէ կամէր նա հարկանել , և ասէ . “ Աոց մնա հրամանիս ,” . և նա ասէ . “ Այո՛ տէր , հրամանիդ քո մնամ ,” : Սուղ ինչ ի վերայ անցեալ՝ ձգեաց արքայ զձեռս իւր . և հար անդէն գահիճն , և ի մի յայն հարուած անկաւ գլուխն ի գետին . զոր առաջի տրարեալ ժողովորդեան և ասէ . “ Ահաւազիկ գլուխ մատնիս ,” : Եւ խուլ իմն և երկարատե հեծութիւնը հնչեցին ընդ Ուայթ-հոլ : Բազումք ի ժողովորդենէն անկանէին ի տեղի սպանութեանն , թաթաւել զթաշկինակս իւրեանց յարիւն արբունի : Գունդք երկու հեծեալգորաց անդր հասեալք , ընդ կրկին առաջս զամբոսին ի բաց արձակեցին : Իբրեւ ամենեքեան գնացին , բարձաւ մարմին արքայի , և եգաւ ի դագաղս : Կամք է զեն Գրոմուելայ տեսանել զնա , և ուշի ուշով

զննեալ զմարմինն , ամբարձ ինքնին զգլուխն , իբրուտեսանել եթէ արդարեւ անջատեալ իցէ յիրանէն , և ասէ . “ Վայելակազմ է յոյժ մարմինս , և ցուցանէ եթէ երկայնօրեայ լինելոց էր սա ի կեանս իւրում ,” :

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Ք

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Ե . Կարեարանի մը վրայ ըլլալու ընդհանուր խնամք :

Վիւղական տնտեսութեան մէջ աւելի անդադար խնամքով մտադրութիւն կը պահանջէ կաթնարանը . ուրուն մէջի ամաններէն միայն մէկը թէ որ անհոգութեամբ աղտոտ թողուի , կամ թէ որ կաթնարանը միշտ ինչպէս որ պէտք է մաքուր չպահուի և խառնափնդոր թողուի . և ուրիշ անթիւ պղտիկ դիտելու հարկաւոր եղածները չհոգացուի , կաթին շատը կ'անպիտանանայ , և կամ ընդհանրապէս աղէկ կաթ չառնուիր : Եւ այս հոգն ու մը տադրութիւնը միշտ ամէն օր պէտք է որ ըլլայ . և հարկ է որ գիւղատէրը իր ընտանիքով այս բանիս հոգն ունենայ , գիտնալով որ վարձուոր մշակներու ձեռք թողլով չկրնար ըլլալ :

Հոլանտացիք այս բանիս մէջ խիստ զգուշաւոր են և շատ մաքուր կը պահեն կաթնարաններն . և ամենեւին տարակոյս չկայ որ Հոլանտայի կարագին և պանրոյն ազնիւ ըլլալուն պատճառն այս է : Ինոր համար պէտք է գիտնալ որ աղէկ կարագ և պանիր հանելու համար՝ արհեստը աղէկ գիտնալը բաւական չէ , այլ աղէկ ընտիր ընելու հոգն ալ պէտք է ունենալ :

Իւրեխառնութեան օդոյ : Կաթնարանին կարեւոր գիտելու մէկ բանն ալ է օդոյն բարեխառնութիւնը , որ պէտք է ջանալ միակերպ պահելու՝ ըստ կարի ամառն ու ձմեռը . որ պէտք է ըլլայ 8 կամ 10 աստիճան իւրեքսի . այս աւտիճանի օդոյն մէջ սերը աղէկ կը բաժնուի կաթէն : Իսկից աւելի տաք եղած